«ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱԿԱՒԱԳԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»

Գրիգոր Բրուտյանի «Յովհաննէս Սակաւագի ժամանակագրական համակարգը» գիրքույկը նպատակ ունի ի մի բերելու միջնադարի ականավոր մատենագրի (մահացած 1129 թ.) տոմարագիտական երկերը («Ժամանակագրութիւն», «Հաղբատի քեռթուկ», «Պատճէն տոմարի», «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ», «Յաղագս Ծ-եկի», «Յաղագս ամսոց Հայոց եւ տաւնից» և այլն) և դրանց վրա հիմնվելով ճշտել նրա ժամանակագրական համակարգը, մանավանդ որ Հովհ. Սարկավագը իր տարբեր աշխատություններում կիրառել է ժամանակագրական բազմաթիվ համակարգեր (Յոթանասնից, Հինգհարյուրյակ, Օլիմպիադ և հատկապես՝ Հայոց Մեծ թվական), և միևնույն իրադարձությունների մասին հեղինակի տվյալները իրար են հակասում նույնիսկ միևնույն երկում: Հենվելով պատմական իրադարձությունների ճշգրտված 41 թվականների վրա, ինչպես, ասենք, Գրիգոր Լուսավորիչի խոր Վիրապից ելնելու, Նիկիո, Կ. Պոլսի, Եփեսոսի տիեզերական, Դվինի, Կարնո, Մանազկերտի հայկական ժողովների, Ծոռազատիկի և այլ թվականների վրա, և դրանք համեմատելով հայկական օրացույցի հիշատակված տարեթվերի հետ, Գր. Բրուտյանը վերականգնել է Հովհաննես Սարկավագի կիրառած ժամանակագրական համակարգը:

Պատմական իրադարձությունների ճշգրտված թվականների և Հովհաննես Սարկավագի երկերից քաղված թվականների համեմատական աղյուսակները փաստում են, որ Հովհաննես Սարկավագի ժամանակագրական համակարգը հուսալի է՝ շեղումներ չի տալիս պատմագիտության նշած տարեթվերից: ՇԼԲ համակարգի կիրառումը պատմական նախորդ և հաջորդ ժամանակների համար Հովհաննես Սարկավագի համակարգը դարձնում են առավել հուսալի, իսկ հայոց շրջիկ ամիսներ համակարգով հեղինակը որոշում է Քրիստոսի ծնունդին նախորդած և հաջորդած պատմական կարևոր իրադարձությունների նույնիսկ ճշգրիտ ամիսը:

Գիրքը օգտակար կարող է լինել պատմաբանների, տոմարագետների և ընդհանրապես բանասերների համար: